

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՆՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 342.9

DOI: 10.52063/25792652-2021.2-115

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
ghazaryanhayk@yahoo.com

Յուրաքանչյուր իրավական ու ժողովրդավարական պետության Սահմանադրությամբ առաջնային խնդիրը պետք է հանդիսանա մարդու հիմնական իրավունքների և ապատությունների երաշխավորումն ու պաշտպանությունը:

Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը լուրջ մարտահրավեր է նետել մարդու իրավունքների պաշտպանությանը: Հաշվի առնելով վարակի տարածման դեպքերը՝ 2020թ.-ի մարտի 16-ից ՀՀ ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն, որը շարունակաբար երկարաձգվել է:

Այս ընթացքում բավմիջս ոչ միայն սահմանափակվել են քաղաքացիների իրավունքները, այլ նաև այդ սահմանափակումները գործնականում կրում էին ոչ իրավաչափ բնույթ և չէին ծառայում իրենց նպատակին, այն է՝ վարակի կանխարգելմանը, այլ միայն նպաստում էին տուգանքի նշանակմանը, որ շատ դեպքերում կրում էր ոչ իրավաչափ բնույթ:

Մեր կողմից սույն հոդվածում բննարկվում են արտակարգ դրության պայմաններում վարչական ակտի իրավաչափության, դրանց բողոքարկման հիմնախնդիրները, վեր են հանվում գործող իրավանորմերի բացերը և պրակտիկայի հիման վրա առաջարկվում են լուծումներ հետազայում նմանատիպ երևույթները կանխարգելելու համար՝ կիրառելով նաև դատական պրակտիկան:

Հիմնաբառեր՝ արտակարգ դրություն, վարչական ակտ, արտադատական կարգ, դատական կարգ, վարչական արդարադատություն, վարչական պատասխանատվություն, սահմանափակում:

Ներածություն

Խոսելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման մասին՝ հարկ է նշել այն կարևոր հանգամանքը, որ Նոր Սահմանադրությամբ դրանց կարգավորմանը տրվել է առավել արդյունավետ լուծում:

Հատկանշական է մի հանգամանք, որ եթե նախկին Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների գլխում սահմանափակման և դրա կարգավորման ձևերի մասին խոսվում էր առանձին հոդվածով, ապա Նոր Սահմանադրության մեջ դրա կարգավորումը այլ ընթացակարգ է ներկայացնում:

Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով մարդու իրավունքների և ազատությունների գլխում ներկայացված յուրաքանչյուր իրավունք, որը սահմանափակման ենթակա է, այդ մասին նշվում է տվյալ հոդվածում, իսկ ահա այն իրավունքների մասին, որոնք բացարձակ են և սահմանափակման ենթակա չեն, խոսվում է մեկ այլ հոդվածում:

* Հոդվածը ներկայացվել է 08.05.2021թ., գրախոսվել՝ 20.05.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Մեր կարծիքով՝ վերը նշված փոփոխությունը առավել ոլորացված է դարձնում իրավունքների և ազատությունների սահմանափակմանը վերաբերվող խնդրի պարզաբանումը:

Անձնական ազատության ու անձեռնմխելիության իրավունքի առանձնահատկությունները մեկն այն է, որ այն բնական իրավունք է, որը մարդ ձեռք է բերում ծննդյան պահից: Մեկ այլ կարևոր առանձնահատկություն է ս, որ ի տարբերություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, որոնք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները (Այվազյան 112):

Ձևական իրավական առումով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը նշանակում է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց իրականացման իրավական անհնարինությունը կամ հավասարապես օրենքով սահմանված դրանց ծավալի կրճատումը:

Ինչպես հայտնի է, իրավունքների և ազատությունների սահմանափակումը իրականացվում է օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով: Այս առումով հարկ է առանձնացնել այն իրավունքներն ու ազատությունները, որոնց սահմանափակումների համար օրենքով նախատեսվում են հատուկ եղանակներ: Սահմանադրությամբ ամրագրված մարդու որոշ իրավունքներ և ազատություններ բացարձակ չեն և կարող են սահմանափակվել: Իսկ որպեսզի այդ սահմանափակումները լինեն իրավաչափ և չխաթարեն մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրական հիմունքները, սահմանափակման հիմքերն ամրագրված են հենց Սահմանադրությամբ:

ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ ու ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, բացառությամբ 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում (Պողոսյան և Սարգսյան 81):

Սահմանադրությունն առաջին անգամ ուղղակիորեն ամրագրում է հիմնական իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող համաչափության սկզբունքը:

Այստեղից կարող ենք պնդել՝ ինչպիսին էլ որ լինեն պետության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները, դրանք իրենց բնույթով ու նպատակային նշանակությամբ պետք է լինեն պիտանի, արդարացված ու համարժեք, հակառակ դեպքում տեղի կունենա իրավունքների ու ազատությունների խախտում և ինչու չէ՝ նաև ոտնահարում:

Արտակարգ դրության պայմաններում վարչական ակտի իրավաչափության և դրանց բողոքարկման հիմնախնդիրները

Արտակարգ դրությունը ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, *հոդված 1*): Այն հայտարարվում է ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում՝ ներառյալ ՀՀ սահմանադրական

կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, նաև արտակարգ իրավիճակները: Անհրաժեշտ է նշել, որ արտակարգ դրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում արտակարգ դրության ընթացքում արտակարգ դրության տարածքում կարող են կիրառվել մի շարք միջոցառումներ և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, *հոդված 7*): 2020 թվականի մարտ ամսից մինչև սեպտեմբեր (ՀՀ Կառավարություն, *N1161-Ն որոշում*), իրականացվել են հետևյալ սահմանափակումները՝

- Անձանց տեղաշարժման ազատության սահմանափակում,
- Տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի սահմանում,
- Հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակում,
- Տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակում և դրանց զննման իրականացում,
- Անձը հաստատող փաստաթղթերի ստուգում,
- Անձնական առարկաների զննում և այլն:

Այսպիսով՝ վերը նշած կետերը իրենց բնույթով ու առանձնահատկություններով հստակորեն նախատեսում են արտակարգ դրության ժամանակ իրագործվելիք գործողություններ, որոնք իրականացվում են բացառապես օրենսդրության շրջանակներում, և անգամ անձանց իրավունքների ու ազատությունների սահմանափակման դեպքում օրենքով նախատեսված կարգով երաշխավորվում է դրանց անխախտելիությունն ու ոտնահարումներից զերծ է պահվում: Այսինքն՝ մեր համոզմամբ իրավունքների ու ազատությունների նկատմամբ թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են և դրանից զատ, պետք է լինեն համաչափ ու նպատակային: Այս առումով հարկ է նշել, որ արտակարգ դրության պայմաններում գործադիր իշխանության մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին: Սահմանադրական իրավունքներ և ազատություններ սահմանելիս հարկ է ղեկավարվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորություններով: Այսինքն՝ արտակարգ դրության իրավական ռեժիմի վերաբերյալ օրենքներում ամրագրված բոլոր հնարավոր սահմանափակումները պետք է բխեն բացառապես արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորություններից, բացի դրանից, օրենքների ու միջազգային պայմանագրերի միջև հակասության դեպքում, ինչը բխում է Սահմանադրության 5-րդ հոդվածի դրույթներից, հարկ է անմիջականորեն ղեկավարվել վավերացված միջազգային պայմանագրերով: Միջազգային պարտավորությունների շրջանակներում գործելու պահանջից անմիջականորեն բխում է նաև այլ կարևոր հիմնադրույթ, մասնավորապես իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս կարող են օրենքով սահմանված սահմանափակումները կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանցից կոնկրետ յուրաքանչյուրի համար առկա են բավարար հիմքեր, հանգամանքներ (Պողոսյան և Սարգսյան 523):

2020 թվականին մեր երկրում հայտարարված արտակարգ դրությունը (ՀՀ Կառավարություն, *N298-Ն որոշում*) և մասնավորապես իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս պատկան մարմինների ընտրած միջոցները մեր

կարծիքով իրենց բնույթով ու նպատակային նշանակությամբ պիտանի չէին, արդարացված և, իհարկե, համարժեք չէին, և շատ դեպքերում հասարակության մեջ դժգոհության, բողոքի և նաև բազմաթիվ գործերով դատական վեճերի առարկա են դարձել, որոնք ավարտվել են դատարանի այնպիսի վճիռներով, որոնցով հաստատվել են վարչական մարմինների կողմից ոչ իրավաչափ գործողությունները:

Սակայն եթե համավարակի սկզբնական շրջանում կարելի է ասել, որ մարդու իրավունքները ժամանակավորապես զոհաբերվեցին օպերատիվ որոշումներ ընդունելուն, ապա նման պրակտիկայի շարունակականությունը լուրջ մարտահրավեր էր նետել մարդու իրավունքների ողջ հայեցակարգին: Խնդիրն առավել էր սրվում հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակի պայմաններում իշխանությունը կենտրոնանում է կառավարության, շատ հաճախ՝ նույնիսկ մեկ անձի ձեռքում: Չէին կիրառվում հանրության լայն շերտերի ներգրավմամբ խորհրդակցություններ, հասարակական կարծիքը լսելու հնարավորություն տվող այլ մեխանիզմներ: Գործում էր միայն տուգանելու ինստիտուտը, որը շատ դեպքերում ոչ մի կապ չուներ համավարակի կանխարգելման հետ, քանի որ հստակ էր, որ «հաց ուտելու» կամ «ջուր խմելու» ընթացքում դիմակ չկրելը կարող էր համավարակի բռնկման վտանգ ստեղծել: Շատ դեպքերում հենց այդ իրավիճակներում էին քաղաքացիներին ենթարկում վարչական պատասխանատվության և շատ դեպքերում դա իրականացվում էր բռնության միջոցով, որը ոչ իրավաչափ է և հիվանդության կանխարգելման հետ ոչ մի առնչություն չունի: Դա է պատճառը, որ վարչական մարմինների սույն գործողությունները դատարանի կողմից վերացվում էին: Ցանկացած քաղաքակիրթ և իրավական պետության մեջ մարդը բարձրագույն արժեք է, իսկ մարդու իրավունքները հարգելի ու պաշտպանելի՝ պետության գոյության առանցքային նպատակն ու պարտականությունն է (ՀՀ Սահմանադրություն, *հոդված 3, մաս 1*), հանրային իշխանության բոլոր մարմինները կաշկանդված են մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով (ՀՀ Սահմանադրություն, *հոդված 3, մաս 3*), ուստի նույնիսկ արտակարգ դրության պայմաններում հիմնական իրավունքների սահմանափակմանը պետք է վերաբերել ծայրաստիճան զգուշությամբ: Այս է պատճառը, որ տարբեր երկրների իրավագիտական հանրության շրջանակներում լուրջ քննարկման առարկա են դարձել այն հարցերը, թե որքանով էին անհրաժեշտ վարակով պայմանավորված՝ մարդու հիմնական իրավունքների սահմանափակումները, եթե անգամ անհրաժեշտ էին, ապա ի՞նչ ժամանակով և ի՞նչ ծավալներով: Զննարկման թեման նախ և առաջ հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության և որոշակիության հարցն է: Սահմանափակումների իրավաչափության գնահատումը մի շարք երկրներում, ինչպես նաև ՀՀ-ում դարձել է նաև դատարանների գնահատման առարկան:

Սահմանադրության 76-րդ հոդվածը, իհարկե, արտակարգ դրության ժամանակ տալիս է հնարավորություն մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու: Սահմանադրական նույն նորմը միաժամանակ պետությանը ներկայացնում է շատ կարևոր պահանջ, այն է՝ հիմնական իրավունքներն ու ազատությունները պետք է սահմանափակվեն միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը: Սահմանադրական այս պահանջին համահունչ՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ իրավունքների և ազատությունների թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են և լինեն համաչափ հիշյալ նպատակների համեմատությամբ («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, *հոդված 10*):

Համաչափության սկզբունքի տեսանկյունից մեր կարծիքով չափազանց կարևոր է, որ Կառավարության կողմից ընդունվեն որոշումներ, որոնք լինեն ճկուն և թույլ տան յուրաքանչյուր կոնկրետ դեպք գնահատել առանձին, այլ ոչ թե լինեն կոշտ և, անկախ

հանգամանքներից, բոլոր դեպքերի համար համընդհանուր լուծում նախատեսող մոտեցումներ սահմանեն:

Մեր կարծիքով՝ արտակարգ դրության ժամանակ մի շարք սահմանափակումների արդյունքում մարդկանց և իրավաբանական անձանց վրա նոր, լրացուցիչ պարտավորությունները, որոնք հանգեցնում են նաև ֆինանսական ծախսերի, ենթակա են փոխհատուցման:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհատական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները: Մեր կարծիքով՝ այդ պարագայում ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակում ֆիզիկական անձանց վրա չպետք է լիներ այդ անհատական պաշտպանության միջոցը ձեռք բերելու պարտականությունը (դիմակ, ձեռնոցներ): Այստեղ ուրիշ խնդիր ունենք, որը վերաբերում է քաղաքացիներին տուգանելուն: Սահմանադրությամբ ունենք վստահ հատուցման իրավունք, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքում նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Այստեղ մեր կարծիքով գոյություն ունի իրավաչափության խնդիր, քանի որ արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքը նախկինում նախատեսել էր պարետի ինստիտուտ, սակայն պարետի ինստիտուտի համար արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքում փոփոխություններ կատարվեցին միայն 2020 թվականի ապրիլի 29-ին, որի ժամանակ էլ նախատեսվեց պարետի կողմից որոշում ընդունելու հնարավորությունը: Սակայն մարտ ամսից մեր երկրում արտակարգ դրություն էր հայտարարված, պարետի կողմից մի շարք որոշումներ էին ընդունվել, սակայն միայն մայիսի 7-ին ապրիլի 29-ին ընդունված օրենքի փոփոխություններն ուժի մեջ մտան (ՀՀ Կառավարություն, *N61 որոշում*): Այսինքն՝ որպես օրենք իրավական հիմքը բացակայում է: Խնդիրը, սակայն, ավելի լուրջ է, որովհետև անգամ իրավական հիմքի բացակայության պարագայում, երբ օրենքում փոփոխություններ կատարվեցին և պարետին նորմատիվ ակտ ընդունելու հնարավորություն տրվեց, այս պարագայում նույնպես խնդիրներ են առաջացել: Միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Պատահական չէ, որ նախկինում արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքը, նախատեսելով պարետի ինստիտուտը, չէր նախատեսել նրա կողմից որոշումներ ընդունելու հնարավորությունը:

Վարչարարության տեսանկյունից, մեր համոզմամբ, պարետի բոլոր որոշումները ենթակա են վիճարկման և այս համատեքստում յուրաքանչյուր ոք հատուցման իրավունք ունի: Հետևաբար քաղաքացիները, ըստ մեզ, կարող են պարետի կողմից կայացված ցանկացած որոշում բողոքարկել Վարչական դատարան, որը մեծամասամբ և իրականացվում է: Այսպիսով՝ ստացվում է, որ կառավարության որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն, այնուհետև այս ամբողջ ընթացքում դրանից բխող հարցերը կարգավորվել են պարետի որոշումներով, որոնք մինչև մայիսի 7-ը ընդհանրապես իրավական հիմք չեն ունեցել:

Այսպիսով՝ գալիս ենք այն համոզման, որ քաղաքացիները ոչ միայն կարող են բողոքարկել վարչական մարմինների կայացրած վարչական ակտերը, որի իրավական հիմքը հենց պարետի որոշումն է, այլ նաև կարող են բողոքարկել պարետի որոշումը, որը հիմք է հանդիսացել իրենց պարտադրելու X քանակի զումար ծախսել այս ամբողջ ժամանակահատվածի համար և դիմակ ձեռք բերել: Այստեղ մեր կարծիքով՝ իրավիճակը երկու մասի է բաժանվում, այսինքն՝ այն անձանց շրջանակը, որոնք արդեն իսկ

տուգանվել են և բողոքարկում են հատուցում ստանալու նպատակով և երկրորդ հատվածն էլ նորմատիվ ակտի գոյության փաստն է, որի հիման վրա անձանց պարտադրում են կոնկրետ գործողություններ իրականացնել:

Գործերի մեծ մասով վարչական մարմնի կողմից չի իրականացվել վարչական վարույթ, մասնավորապես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելը լսել նրան: Վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց լսված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջինները հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական ու փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական ու իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա, իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի, ի գիտություն ընդունի և գնահատի վարույթի մասնակիցների դիրքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռնված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն՝ ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն ակթոյալատելի է:

Այսպիսով՝ իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը (ՀՀ Վճռաբեկ դատարան, ԿՂ/5539/05/11):

Այդ նպատակին հասնելու համար օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում սահմանել է վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր:

Այսպես՝ նախևառաջ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու՝ վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններին հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Մեր կարծիքով՝ վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում են կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա

հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումն ու գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսմները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա: Բազմաթիվ դեպքերով վարչական մարմինը առանց ապացույցներ ներկայացնելու քաղաքացիներին տուգանում է դիմակ չկրելու համար և այդ պարագայում հարկ չէր համարում իրականացնել պատշաճ վարչական վարույթ, քանի որ վարույթի ընթացքում շատ դեպքերում կպարզվի իր կայացրած որոշումների ոչ իրավաչափ բնույթը և դա է պատճառը, որ շատ դեպքերում միանգամից եզրափակիչ փուլով կայացնում է որոշում վարչական տույժ նշանակելու մասին:

Վարչական վարույթի մասին ծանուցելու («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, *հոդված 35*) նախատեսված կառուցակարգն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու՝ լաված լինելու իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լուսմների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների՝ լաված լինելու իրավունքի գործնական իրացումը: Թեև վարչական վարույթի մասնակիցներին վարույթի մասին ծանուցելը և վարույթի մասնակիցներին քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը՝ լսելը, կատարվում են վարչական վարույթի երկու տարբեր փուլերում և նախատեսված է վարչական վարույթի հարուցման և ընթացիկ փուլերը կարգավորող իրավական նորմերով, սակայն նշված ընթացակարգային գործողությունները հետապնդում են մեկ միասնական նպատակ, որը հանգում է մարդու՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների իրացման երաշխավորմանը:

Այդ է պատճառը, որ դատարանում գտնվող գործերով հաղթող է ճանաչվում քաղաքացին, քանի որ դատարանի համար ակնհայտ է վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ գործողությունների արդյունքով քաղաքացու իրավունքների խախտումը: Բազմաթիվ գործերով, մասնավորապես՝ ՎԴ/6520/05/20, ՎԴ/7880/05/20, ՎԴ/7324/05/20 ՀՀ վարչական դատարանը մատնանշել է, որ վարչական վարույթի մասնակիցների՝ լաված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը (ՎԴ/6520/05/20; ՎԴ/7880/05/20; ՎԴ/7324/05/20): Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումն ու գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսմները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա:

Ուսումնասիրելով վարչական գործերում առկա փաստաթղթերը՝ Դատարանը վերևում նշված գործերով փաստել է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերում բացակայում է որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ հայցվորը սահմանված կարգով

ծանուցվել (իրազեկվել) Է պատասխանողի որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ինչպես հարուցման, այնպես էլ գործի քննության տեղի, օրվա և ժամի մասին, որից ելնելով՝ արձանագրում Է, որ տվյալ դեպքում հայցվորի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վարչական վարույթին վարչական պարտավորություններ ստանձնող անձի մասնակցությունն ապահովելու, քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և վերջինիս կողմից իր իրավունքները լիարժեքորեն իրացնելու իրական հնարավորություն ընձեռելու ուղղությամբ, ինչի արդյունքում չի ապահովվել վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը՝ վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքը:

Նաև շատ հետաքրքիր Է այն փաստը, որ վարչական դատարանի կողմից կայացված վճիռները վարչական մարմինների կողմից չէին բողոքարկվում վերաքննության կարգով, որը մեր կարծիքով վկայում Է այն մասին, որ վարչական մարմինն էլ էր հասկանում իր կայացրած ակտերի ոչ իրավաչափության աստիճանը:

Միաժամանակ գտնում ենք, որ վարչական վարույթն իրականացնող մարմինը իր ակտերում պետք է կոնկրետ մատնանշի, թե հայցվորը կոնկրետ որ իրավական ակտի որ դրույթն է խախտել:

Մեր համոզմամբ՝ վիճարկվող որոշումների մեջ որպես խախտված իրավանքում նշված ՀՀ պարետի 2020թ. մայիսի 3-ի թիվ 63 որոշման 14-րդ հավելվածը, որը չափազանց անորոշ ձևակերպում է, չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, և քաղաքացիները, ստանալով վարչական ակտերը, չէին կարող հասկանալ, թե կոնկրետ որ կանոնների խախտման համար են ենթարկվել վարչական պատասխանատվության:

Նույնաման դիրքորոշում Է հայտնել նաև Վճռաբեկ դատարանն իր մի շարք նախադեպային որոշումներով անդրադառնալով վարչական ակտի հիմնավորվածության պարտադիր լինելու հանգամանքին (ՀՀ Վճռաբեկ դատարան, ՎՃ/2127/05/11):

Սույն պարագայում գտնում ենք, որ քաղաքացիների նկատմամբ կայացված վարչական ակտերը մեծամասամբ չէին պարունակում անհրաժեշտ և բավարար նշումներ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքի և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտերի մասին:

Հարկ է նշել, որ պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշում ասելով պետք է հասկանալ այն ակտերի և դրանց համապատասխան նորմերի ամբողջությունը, որոնք կապահովեն իրավախախտման բնորոշումը և դրա համար սահմանված պատասխանատվությունը, այլպես կարելի է ենթադրել, որ վարչական մարմինն օրենքի մակարդակով հնարավորություն է տրվում չհիմնավորված որոշումներ կայացնելու:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերևում բերված փաստերը՝ առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները՝

- «Վրտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում Է, որ անհատական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները: Մեր կարծիքով՝ այդ պարագայում ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակում ֆիզիկական անձանց վրա չպետք է լիներ այդ անհատական պաշտպանության միջոցները ձեռք բերելու պարտականությունը (պաշտպանիչ դիմակ, ձեռնոցներ, պաշտպանիչ գլխարկներ):

• Գործերի մեծ մասով վարչական մարմնի կողմից չի իրականացվել վարչական վարույթ, մասնավորապես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելը լսել նրան: Այսպիսով՝ իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը, որը պետք է տվյալ դեպքում պարտադիր կիրառվեր: Մեր կարծիքով՝ վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումն ու գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ թևարկումը:

• Հաջորդ կարևոր առաջարկությունն այն է, որ քաղաքացիների նկատմամբ կայացված վարչական ակտերը մեծամասամբ չէին պարունակում անհրաժեշտ և բավարար նշումներ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքի և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտերի մասին, որը քաղաքացիների համար իրենց իրավունքների իրացման հարցում լրջագույն խոչընդոտներ էր առաջացնում:

• Մեր կարծիքով՝ նաև անհրաժեշտ է տվյալ դեպքում օգտագործել արտասահմանյան փորձը, քանի որ սա նոր իրավիճակ է մեզ համար և պարտադիր է այլ երկրների հետ համագործակցության միջոցով իրականացնել միջոցառումներ, որոնք այս կամ այն չափով սահմանափակում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, սակայն զերծ են պահում հիմնական իրավունքների խախտումներից:

• Մեկուսացման կանոնների կարգավորումների հետ կապված մեկ այլ խնդիր է նաև վերանայումների և բողոքարկման մեխանիզմի հարցը, այդ թվում՝ կապված դատական պաշտպանության իրավունքի հետ: Օրինակ՝ եթե անձը գտնում է մեկուսացման մեջ և իրեն ներկայացված պահանջն ապօրինի է, ինչպես է բողոքարկելու այն: Արդյոք կարողանալու՞ է դիմել վարչական մարմնին, թե՞ պետք է հարցը լուծվի դատական կարգով: Եթե անձը ենթարկվում է մեկուսանալու պահանջին, նշանակում է, որ մեկուսացման պետք է ենթակա լինեն նաև իր հետ նույն բնակարանում ապրող մարդիկ, և եթե վերջիններից որևէ մեկը համաձայն չէ մեկուսացման ենթարկվելուն, ապա արդյոք կարո՞ղ է բողոքարկել այդ պահանջը: Այս մասին կարգավորում առկա չէ և ո՛չ մի օրենքում, հետևաբար նման կարգավորումները ևս անհրաժեշտություն են: Նշված բոլոր դեպքերում պետք է լինեն հատուկ կարգավորումներ՝ հաշվի առնելով իրատապությունը:

• Նաև փաստում ենք, որ օրենսդրորեն կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակի վերաբերյալ մի շարք հիմնական գործընթացներ: Մասնավորապես օրենսդրությամբ սահմանված չեն այն դեպքերը, երբ որոշակի իրադրության պատճառով առաջացած հետևանքների ծանրության աստիճանը կամ հանրապետությունում և դրա առանձին հատվածներում առկա այն իրավիճակը, որոնց պարագայում կարող է կամ պետք է սահմանվի արտակարգ իրավիճակի ռեժիմ: Ավելին՝ բաց է այն հարցը, թե պետական որ մարմինը և ինչ ժամկետներում ու կարգով է իրավասու հայտարարել արտակարգ իրավիճակ: Այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու որևէ իրավական հիմք և չափանիշներ համապատասխան օրենքներով սահմանված չեն:

• Խնդրահարույց է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» 182.4 հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվությունը՝ կապված կարանտինի ընթացքում անձանց ազատ տեղաշարժելու իրավունքի կամ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու համար, իսկ նույն հոդվածի 7-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսվել կարանտինի ընթացքում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու համար:

Ակնհայտ է, որ 182.4-րդ հոդվածի թե 2-րդ, և թե 7-րդ մասերով պատասխանատվություն է նախատեսվում բացառապես նույն արարքի համար, իսկ այդ պայմաններում արարքի որակման խնդիր է առաջանալու: Այսինքն՝ նման կարգավորման պայմաններում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու կամ դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու դեպքերում հարց է առաջանալու, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածի ո՞ր մասով է անձը ենթակա լինելու պատասխանատվության՝ նկատի ունենալով նաև, որ որպես վարչական պատասխանատվություն նախատեսված տուգանքի չափերը տարբեր են (համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամ և 50.000 ՀՀ դրամ):

Օգտագործված գաղանկություն

1. Այվազյան Վարդան. *Մարդու իրավունքներ*. Ուսումնական ձեռնարկ. Երևան, 2014. <http://ysu.am/science/hy/Vardan-Ayvazyan>:
2. ՀՀ Ազգային ժողով *«Խոտանառոտության հոսանքային ռեժիմի մասին» ՀՀ օրենք*. 21.03.2012. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=7535>:
3. ---. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք. 18.02.2004. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=144936>:
4. ՀՀ Կառավարություն. *N1161-Ն որոշում*. 13.07.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
5. ---. *N298-Ն որոշում*. 16.03.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
6. ---. *N61 որոշում*. 29.04.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141952>
7. ՀՀ *Սահմանադրություն*. 06.12.2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>
8. ՀՀ վարչական դատարան. *Դատական Գործ N: ՎԴ/6520/05/20*. [26.11.2020](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253:
9. ---. *Դատական Գործ N: ՎԴ/7324/05/20*. [19.02.2021](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078:
10. ---. *Դատական Գործ N: ՎԴ/7880/05/20*. [23.12.2020](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769:
11. ՀՀ վճռաբեկ դատարան. *Դատական Գործ N: ՎԴ/2127/05/11*. [18.07.2014](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809514051). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809514051:
12. ---. *Դատական Գործ N: ՎԴ/5539/05/11*. [28.11.2014](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809532385). http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809532385:
13. Պողոսյան, Վարդան և Սարգսյան, Նորա. *ՀՀ Սահմանադրության համառոտ պարզաբանումներ*. Երևան, 2016:

Works Cited

1. Ayvazyan Vardan. Mardu iravunqner. Usumnakan d'er'nark. [Human rights. Textbook: Yerevan, 2014.] Erevan, 2014. <http://ysu.am/science/hy/Vardan-Ayvazyan>
2. HH Azgayin jhoghov. «Artakarg drut'yan iravakan r'ejhimi masin» HH o'renq. 21.03.2012. [National Assembly of Armenia, the RA law "On legal regime of state of emergency"] <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=7535>.
3. «Varchararut'yan himunqneri & varchakan varuyt'i masin» HH o'renq. 18.02.2004. the RA law "On the Basics of Administration and Administrative Proceedings" 18.02.2004. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=144936>.
4. HH Kar'avarut'yun. N1161-N voroshum. 13.07.2020. [Resolution of the Government of the Republic of Armenia N1161-N of 13.07.2020.] <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
5. ---N298-N voroshum [Decision N298-h of 16.03.2020] 16.03.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>
6. ---N61 voroshum. [Decision N61 29.04.2020] 29.04.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141952>
7. HH Sahmanadrut'yun. [The Constitution of the Republic of Armenia 06.12.2015.] 06.12.2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>
8. HH varchakan dataran. Datakan Gorc' N: VD/6520/05/20. [RA Administrative Court: court case N: VD/6520/05/20 26.11.2020.] 26.11.2020. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253
9. Datakan Gorc' N: VD/7324/05/20. [Court case N: VD/7324/05/20, 19.02.2021.] 19.02.2021. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078
10. Datakan Gorc' N: VD7880/05/20. [Court case N: VD7880/05/20, 23.12.2020.] 23.12.2020. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769
11. HH Vtwr'abek dataran. Datakan Gorc' N: VD/2127/05/11. [RA Court of Cassation: court case N: VD/2127/05/11] 18.07.2014, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809514051
12. Datakan Gorc' N: VD/5539/05/11. [Court case N: VD/5539/05/11] 28.11.2014. http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809532385
13. Poghosyan, Vardan & Sargsyan, Nora. HH Sahmanadrut'yan hamar'ot parzabanumner. Erevan, [Brief explanations on the RA Constitution: Yerevan] 2016.

**ANALYSIS OF THE LEGAL BASIS FOR APPEALING AN
ADMINISTRATIVE ACT AND THE TASKS OF
IMPROVING THEM IN A STATE OF EMERGENCY**

HAYK GHAZARYAN
*European University of RA,
Department of Jurisprudence, Applicant,
Yerevan, Republic of Armenia*

In the Constitution of every legal and democratic state, the primary problem is the guarantee and protection of fundamental human rights and freedoms.

The spread of the new coronavirus disease poses a major challenge to human rights protection. Taking into account the spread of infectious disease cases, from March 16, 2020, an emergency was declared throughout the territory of the Republic of Armenia, which was prolonged for a long time.

In this period, not only the rights of citizens were repeatedly limited, but also these restrictions were uneven in practice and did not serve their purpose, that is, the prevention of the disease, but only contributed to the appointment of fines, which in many cases were illegal.

From our side, this article examines the main problems of the regularity of an administrative act in a state of emergency, their appeal, identifies problems in the current legal norms and, based on the practice, proposes solutions to further prevent such phenomena, also applying judicial practice.

Keywords: *emergency, administrative act, extrajudicial act, judicial order, administrative justice, administrative offense, restriction.*

АНАЛИЗ ПРАВОВЫХ ОСНОВ ОБЖАЛОВАНИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА И ПРОБЛЕМЫ ИХ ОБЖАЛОВАНИЯ В УСЛОВИЯХ ЧРЕЗВЫЧАЙНОЙ СИТУАЦИИ

ԱԿԿ ԿԱԶԱՐՅԱՆ

*Сотскаатель кафедры юриспруденции Европейского университета РА,
г. Ереван, Республика Армения*

Основным положением Конституции каждого правового и демократического государства является гарантия и защита основных прав и свобод человека.

Распространение нового коронавирусного заболевания представляет собой серьезный вызов защите прав человека. Учитывая случаи распространения инфекционного заболевания, с 16-го марта 2020 года на всей территории РА была объявлена чрезвычайная ситуация, которая последовательно продлевалась.

В этот период права граждан претерпели множество ограничений; данные ограничения имели на самом деле незаконный характер и не могли привести к достижению их цели, то есть профилактики заболевания, они лишь способствовали назначению штрафов, что во многих случаях было неправомерным.

В данной статье мы рассматриваем основные вопросы о законности реализации административного акта в условиях чрезвычайной ситуации и его обжалования, а также выявляем пробелы в действующих правовых нормах и на основании имеющейся практики предлагаем решения для дальнейшего предотвращения подобных явлений, используя при этом также и судебную практику.

Ключевые слова: *чрезвычайная ситуация, административный акт, внесудебный акт, судебный порядок, административное правосудие, административное правонарушение, ограничение.*